ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (20.01.2025թ.-19.06.2025թ.), ԵՐԵՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ (21.04.2025թ., 22.04.2025թ., 15.05.2025թ.) ԵՎ ԵՐԵՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ (01.07.2025թ., 03.07.2025թ., 04.07.2025թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման իններորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2025 թվականի հունվարի 20-ին և ավարտվել հունիսի 19-ին:

Գումարվել է՝

- 8 հերթական,

- 3 արտահերթ նիստեր՝ ապրիլի 21-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ, ապրիլի 22-ին՝ կառավարության նախաձեռնությամբ և մայիսի 15-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 3 արտահերթ նստաշրջան՝ հուլիսի 1-ին՝ կառավարության նախաձեռնությամբ, հուլիսի 3-ին Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ և հուլիսի 4-ին Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ:

Ազգային ժողովն ընդունել է 274 օրենք, որից՝

- 6-ը «մայր» օրենքներ են՝ («**Երիտասարդական քաղաքականության մասին**», «**Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին**», «**Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին**», «**Կրիպտոակտիվների մասին**»,

«**Բնակչության պետական ռեգիստրի մասին**» և «**Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին**»):

- 254՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 14՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 243-ի հեղինակը Կառավարությունն է, 26-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 5-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 26-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 43-ինը՝ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 47-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 14-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 71-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 63-ինը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընտրել է՝**

- Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Արսեն Թորոսյան)
- Բարձրագույն դատական խորհրդի երեք անդամ (Արմենուհի Հարությունյան, Աշոտ Հայրապետյան, Անահիտ Աբրահամյան),
- Սահմանադրական դատարանի դատավոր (Արտակ Զեյնալյան),
- Հաշվեքննիչ պալատի անդամ (Ժիրայր Մխիթարյան),

- **նշանակել է՝**

- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ (Աննա Պետրոսյան):

- **որոշմամբ հաստատել է՝**

- Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

- **ընդունել է՝**

«Բռնության ճանապարհով պետական իշխանությանը տիրանալու անթույլատրելիության և ժողովրդավարության պաշտպանության մասին» հայտարարությունը:

- **քննարկել է՝**

- գլխավոր դատախազի միջնորդագրերը և ընդունել որոշումներ հինգ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն

համաձայնություն տալու մասին և մեկ պատգամավորին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին:

- **լսել է և ընդունել է ի գիտություն՝**

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի գործունեության և տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 2024 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի 2024 թվականի գործունեության մասին հաղորդումը,
- 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը եւ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2024 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը,
- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդումը,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի գործունեության մասին հաղորդումը,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույցը: